

Յայտարարքներու մէջ Բուզայի օրով¹¹ եւս նշանակուած է, որով համանուն զոյգ եղբայրներ երեւան կու գան (Պատմ. Հայոց, Բ., էջ 1035, հմմտ. Հ. Աճառեան, Հայոց անձնանունների Բառարան, Երեւան 1942, էջ 511):

Յովհան Պատմարանի (Պատմ., էջ 137—138) եւ Ասողկի (Պատմ., էջ 167) Գուրգէնի ու Դաւիթի նուիրած տողերուն մէջ ոչ թէ միայն պատմական կէտերու, այլ եւ դադարի մեծ նմանութիւն կայ եւ մէկուն մէկալէն օգտուելն ակնբախ է: Աւելորդ է կրկնել թէ ասոնց եւ Սահակ-Համազասպ Արծրունեաց վկայարանութիւններու նմանութիւնն ալ աչքառու է:

Գուրգէն եւ Դաւիթ Գնունիներու նահատակութիւնն երգած է Ս. Հէքիմեան (Բագմավէպ, 1848, էջ 122—124):

Շապուհ Բագրատունին կ'աւանդէ, թէ (անդ, էջ 82) Վասպուրականի Գուրգէն իշխանը հրաւէր կարդալով կը յաջողցնէ, որ Սմբատ Բագրատունի թագաւորին Ափխազներու դէմ ըրած ասպատակութեան մասնակցին Գնուններն ալ, սակայն անոնց անունն ու դործը կը լռէ:

Ուշիկ կաթողիկոսը 976ին Նախավկայի վանքին թեմ ու վիճակ կը հաստատէ Նախիջեւան գաւառը — հրամանով Աշոտ թագաւորին — եւ կը գրէ հաստատագիր կոնդակ մը, որուն մէջ կը յիշուին հայազգի շատ մը իշխաններու անուններ: Անոնց կարգին նմանապէս Գնունի մը՝ Գէորգ: «Եւ յաւարտումն եղեւ բանիս եւ գրիս ձեռամբ մեծանուն տեառն Ուշիկայ կաթողիկոսի ամենայն Հայոց եւ տէր Բարգէնի եւ մեծ իշխանացն Ապղարիպի իշխանին Հայոց եւ Վրաց, Վասակ իշխանին Սիւնեաց, Գրեգոր իշխանին Ռշտունեաց, Գէորգ իշխանին Գնունեաց, Շապուհ իշխանին Արծրունեաց»:

Նոյն թուականին Աշոտ թագաւորին Նախավկայի վանքին տուած նուիրագրին մէջ ալ կը հանդիպինք Գէորգ Գնունիի անունին եւ երկուքին մէջ ալ Արծրունի իշխանէն յառաջ յիշատակուած: Նաեւ 981ին Հոբիսիմէ արքայազստեր կտակագրին մէջ Գէորգին անունը Շահապ Արծրունիէն առաջ դրուած է (Ասոնց մասին հմմտ. Մ. արքեպ. Սմբատ

¹¹ Անոր ժամանակները կը նահատակուին երկրորդ Ատովմեանները (հմմտ. Ասողկի, էջ 168՝ «էին ի սոցանէ արք եօթն, որոց գլխաւորին անուն Ատով կոչուի, որ էր յԱյրաի գաւառէ յՍսերան գեղէն», հմմտ. նաեւ Յովհ. Կաթ., էջ 123—124):

տեանց, Նկարագիր Երնջակայ Ս. Կարապետի վանից եւ շրջակայից նորին Տփլիս 1906, էջ 411, 419 եւ 424 եւ Հ. Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ., Վիեննա 1942, էջ 536 եւ 580):

Գէորգով կը ստիպուինք Գնունիներու տոհմին պատմութիւնը փակել: Սակայն միշտ բաղձալի եւ հետաքրքրական կը մնայ զիտնալ՝ թէ ե՛րբ եւ ի՛նչ պարագաներու տակ այդ զարմին կենսունակ արմատն ու ճիւղերը ամլութեան եւ չորութեան կը դատապարտուին:

Այսպէս Ժ. դարուն մէջ — գուցէ — Պատմութեան բեմէն կը հեռանան Գնունիները, թէեւ դեռ այսօր պակաս չեն այդ մականունով ընտանիքներ: Անոնք կը հեռանան սիգապանձ ու անբասի՛ր: Չունին իրենց երամին մէջ հաւատուրաց անձ եւ դասալիք զինուոր ու զօրավար: Հայ արքունիքին եւ նախարարութիւններու հետ լաւ յարաբերութիւն կը մշակեն եւ միշտ կազմ ու պատրաստ՝ անոնց հետ հասարակաց թշնամիին դէմ ոգորելու: Հաւատքի եւ հայրենիքի համար կը զոհեն փառք ու հարստութիւն. հանգիստ ու կեանք: Միշտ քաջակորով եւ պատնէչի՛ վրայ: Յաղթութեան դարնեայ պսակը՝ իրենց վարսերուն վրայ հանդչած:

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ԱՐՑՈՒՄԻ ՎԱՆՔԵՐԸ

(Շարունակութիւն):

5. ԿԻՉԱՆԻ ԱՆԱՊԱՏԸ

Համանուն գիւղի արեւմտեան կողմը: «Բերդաձեւ սարին վերայ շինուած է անտաշ քարով մի եկեղեցի երկու կամարների վերայ: Բոլորովին անփնաս է եւ կանդուն: Ունի եւ միարանից համար մի քանի խուցեր, հանգստարան զարդարուած խաչարձաններով, ուր կան եւ վարդապետաց գերեզմաններ¹⁴» (Արցախ, էջ 167):

¹⁴ Ուշիկայի մէջ կայ Կարմիր վանք եկեղեցի մը, որ չեմ կարծեր՝ թէ իսկապէս վանք եղած ըլլայ (Արցախ, էջ 192):

6. ԿՕՇԻԿ ԱՆԱՊԱՏԸ

«Հիմնարկուած է Քոլատակ գիւղի վերեւ համանուն գետակի ձախ կողմը» (Արցախ, էջ 168): Ունի երեք տաճար, երեքն ալ անտաշ քարով շինուած: Միջին տաճարի բեմին ժողովրդահայեաց երեսին վրայ քանդակուած է՝ «Հասանայ եւ Մամա խաթունին թոռն Գ. հետ ի դանն զնացի, յամի... իմ ազգէն թափեցի դ... ատաստանաւ զհարկանին մեր... Ուերխան, Մարծպան, Մամիկոն կամեցաք նորոգել զմեր գերեզմանատունս, ես էրիվան... եցի զսուրբ Ստեփաննոս եւ նորոգեցի զայլ եկեղեցիքս եւ զարդարեցի Մխեթար եղբաւր իմոյ... թ ես Մարտիրոս. ես Սեւադա տվի զԳրեգորանաց, զՄուրնդանաց, զԳեղմարանց ի սուրբ եկեղեցիս... մն Ժ. աւր ժամ Հասանա զատկին, Բ. Մամա խաթունին՝ Վարդավառին. Ա. Ռուզու... Բ. Ուերխանին յայտնութեան... կատարին. որ հաւաակի կամ զրկել ջանա զայս տեղիս ի սուրբ Գէորգա, ոսոխն նորա Աստուած եղիցի... գրեցաւ ի թվ. Հայոց 207»:

Ինչպէս այս արձանագրութիւնը կը վկայէ Կօշիկ անապատը իշխանագուններու գետնադամբանն եղած է: Գաւիթին մէջ կան քանի մը յաւերթօրէն ննջողներ: Անոր որմերէն մէկուն վրայ կը կարդացուի՝ «ՈՂԳ. Յանուն Աստուծոյ եւ Պոռ յորդի իշխանին Վասակայ (գրուած՝ Վակա) յուսով միարանեցայ Կոշիկ անապատոյ, տվի խաչ, աւետարան, (տօ)նապատճառ, միարանքս տվին սուրբ խաչի Զ. աւր ժամ, որչափ կենդանի եմ իմ մաւրն, յետ ելից իմոց ինձ. կատարիչքն աւրհնին, խափանիչքն դատին յաստուծոյ» — Ես Շղել, որդի... այ իմ ընչից զնեցի հող... բնակեցայ սուրբ Նշանիս, կամակցութեամբ եղբարց Կոշիկ անապատոյ եւ տվին ինձ ի տարին Բ. ժամ սուրբ Գրեգորին աղուհացն, Ա. իմ որդի Ուշախին, Ա. իւր մաւրն, յետ ելից իմոց ինձ:

Այսպէս՝ նաեւ այս արձանագրութիւններէն յայտնի կ'ըլլան տաճարներու անունները՝ Ս. Գէորգ, Ս. Ստեփաննոս եւ Ս. Նշան: Այսօր միարաններու սենեակներն աւերակա կոյտեր են: — Կոշիկի մէջ 1493ին Աւետարան մը կը գրուէր (Արցախ, էջ 168—169 եւ 247):

7. ՀԱՄԱՄԻ ՁՈՐԻ ԱՆԱՊԱՏԸ

Համամի ձորի ձախ ափին կայ եկեղեցի մը, որ անապատ կոչուած է: Գուցէ ճգնա-

տեղի կամ շատ փոքրիկ վանք՝ եղած ըլլայ (Արցախ, էջ 183):

8. ՀԱՒԱՊՏՈՒԿԻ ՎԱՆՔԸ

Գանձասարի, Սոխանաբերդի եւ Ուշիկ գետակի մօտ ձուածեւ սարի մը գագաթին կանդնած է այս վանքը, որ փոքր ու թաղակապ է եւ պղտիկ դաւիթ մ'ունի: Հետեւեալ արձանագրութիւնները կը ներկայացնեն անոր պատմութիւնը՝ «Թիւն ՈԺԲ. էր յիշխանութեան Հասանա, որդո Վախտանգա եւ ամուսնո նորա Մամբանա, ես տէր Յոհան քվերորդի տէր Գրեգորո եւ Գէորգ եղբաւրորդի եւ այլ միարանքս շինեցաք զեկեղեցիքս ի փրկութիւն հոգոց մերոց եւ յիշատակ ծնողաց մերոց»: — «Յանուն Աստուծոյ եւ Աթանաս, որ Գրեգին երկիրն զնեցի ի Հաւուց պտուկ տվի. Հայր Գէորգ եւ այլ միարանքս տվին ի տարումն Գ. աւր պատարագ նոր Կիրակէին, որ զհողն յեկեղեցոյս հանէ ՅԺԸ հայրապետացն նգոված է»:

Հաւապտուկ դամբանարան է Ջաջուռեանց ցեղին. հոն ամփոփուած են Սմբատ, Արուսեղ եւ Հասան (Արցախ, էջ 181—182. 1էօ, իմ յիշատակարանը, էջ 383):

Աւետարանի մը յիշատակագրութեանն են հետեւեալ տողերը, որոնք կը ցուցնեն թէ Հաւապտուկի վանքը աննշան վանք չէ եղած՝ «Ստացաւ զայս աստուածախօս աւետարանս յիշատակ եւ փրկութիւն հօր մեր բարեպաշտ իշխանին Ջաջոյ եւ եղ ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւապտուկ, որ է շինեալ յանուն սրբոյ Աստուածածնի եւ բնակութիւն եւ շիրիմ Ջաջոյ իշխանին եւ նախնեաց մերոց... Գրեցաւ սա... ի գերահոջակ սուրբ ուխտ(ի)ս Հաւապտուկ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Լուսաւորչիս Գրեգորի ձեռամբ մեղապարտ Ստեփաննոսի...» (Ջալալեան, Ճամբ, Բ., էջ 216—217. հմմտ. Բարխուդարեան, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 234. Յովսէփեան, Ոսկերչական արուեստի մի նմուշ ԺԳ. դարում [Սոտակերաց Ս. Նշան], էջ 2, արտատպ. Գեղարուեստէ, 1911, Թ. 4. նոյնը՝ Ուղարկեանք կամ Պոռչեանք, Վաղարշապատ 1928, էջ 29):

9. ՄԵՏ-ԱՐԱՆՑ ԿԱՄ ՄԵՏ-ԻՐԱՆԱՑ ՎԱՆՔԸ

Քոլոտակ եւ Թրղուն գիւղերու մօտ, բարձր լեռնաբազկի մը սեռի հարթակին վրայ շինուած է Արցախի այս հոջակաւոր վանքը:

Տաճարը նեղ, երկար ու բարձր է: Ղեկնողեանց անապատին կը նմանի: Անտաշ քարերով շինուած է եւ սրեն չունի: Չուրկ է նաեւ փոքր խորաններէ, ուստի եւ միակ խորան մ'ունի: Բեմը չափազանց բարձր է: Ունի քանի մը դուռ եւ գաւիթ մը, որուն դրան երկու կողմերը կան գոյգ խաչարձաններ արձանագրութեամբ¹⁵: Սոյն գաւիթին մէջ շատ բարձր աստիճանաորներու ածխեններն ամփոփուած են:

Այս տաճարին կից կայ միեւնոյն ոճով շինուած ուրիշ տաճար մըն ալ, իսկ ասոնց հարաւային կողմը կը գտնուի սրահ մը, ուր քանի մը կաթողիկոս թաղուած է: Չալալեան Ս. Յակոբ երեք սագաչէն եկեղեցիով օժտուած գիտէ (ձանապարհ, Բ., էջ 192):

Մեծարանց Ս. Յակոբի վանքը ունի շատ մը արձանագրութիւններ, որոնք ցերցան հրատարակուած են ճամբորդական գրութիւններու մէջ (Հմմտ. Չալալեան, Ճամբ., Ա., էջ 193—194. Բարխուդարեան, Արցախ, էջ 169—171): Չանոնք ամբողջութեամբ հրատարակած է Դաղեան վարդապետը «Բանասէր»-ի մէջ (1901, էջ 135—147):

Անոնց կարեւորները եւ անոնց ալ էական բովանդակութիւնները յառաջ բերելով պիտի գոհանանք՝ ծանրութենէ խուսափելու մտաճուրթեամբ:

1. Հարաւային գաւթին հարաւարեւմտեան սրահին վրայ կայ՝ «Թագոր Չալալայ Դովին հրամանով եւ Սմայատ որդի Հեջրին ավի էգատեղ Գրիգորոյ, նա ի տարումն Դ. ժամ երես Յայտնութեանն Բ. ինձ եւ Բ. Թամարին...»:

2. Սոյն գաւթին արեւմտեան դռնատեղի պատին վրայ՝ «Ես Չաքարէ որդի վախտանգա տեանն խաչինոյ ավի գիւնորիտա կոռ երկիրն ի տունս մեծարեանց, տէր սարգիս ես մեզ Ժ. աւր ժամ ի տարում Ե. ինձ. Ե. ամուսնս իմ արդու խաթունին սրբո խաչի տաւնին...»:

¹⁵ Այս կը գրէ՝ «Ս. Յակոբայ վանքը հասարակ եւ անգար շինութիւն է: Փոքրիկ տաճարը չըջապատուած է բազմաթիւ նեղ եւ միջին խորով, ծակ ու ծուկերով: Թէեւ վանքը հին է, Գանձասարէց էլ հին, շինութեան քարերը վերանորոգիչները առանց որ եւ է կարմարութեան եւ ճաշակի զրկել են պատերում...: Ամբողջ շինութիւնը մի անշտորճ կարկատանի տպաւորութիւն է թողում: Սա էլ հին ժամանակները հոչակաւոր վանք է եղել: Երա կոչուելիս է եղել Մեծարանց վիճակ: Պատերի մէջ զբոս զին քարերն ուստի արձանագրութիւններ: Ժամատանը կայ Յակոբոս արքայիկոպոսի եւ Մեծարանց հայրապետի գերեզմանը...» (Իմ յիշատակարանը, էջ 400—410):

3. Գաւթի հիւսիսային պատին հիւսիսարեւմտեան կողմի կամարի ներսի պատին վրայ՝ «Կամաւն աստուծոյ ես ոքան եւ պապքան որդի սարգսի հոգո որդւոյն միարանեցաք սուրբ նշանիս ընծայիւք ի շխանութեան Չալալայ տաւլին տր վղ եւ միարանքս Ժ. ժամ ավին մեր եղբարն մերչս մեծի Ե. չարաթ... թվ. ՉԱ.» (Հմմտ. եւ Յովսէփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան Ա. Պրակ, Երուսաղէմ 1935, էջ 13):

4. «Յիշխանութեան Չալալին ես խութլուրէկ որդի խոյտանա միարանեցա սուրբ ուխտիս ընծայիւք տէր Ս. եւ միարանքս ավին ի տարումն Բ. աւր ժամ ի տաւն գատկի... թվ. ՉԽԲ»:

5. «Ես ուղուրիչս միարանեցա սուրբ նշանիս. տ. Ս. եւ միարանքս Գ. ժամ ավին վարդավառին... թվ. ՉԽԲ»:

6. «Ես Խոյղան Աւշինայ որդի միարանեցայ սուրբ նշանիս ընծայիւք. տէր Սգ եւ միարանքս ավին ինձ ի տարումն Ա. աւր ժամ...»:

7. «Ես Գրիգոր որդի Սմբատա միարանեցա տանս Մեծաիրանց յառաջնորդութեանս տր Սարգսի եւ տր վղ եւ տուի սուրբ նշան եւ աւետարան եւ Ա. կիսավար իւր հոգով ի Մեղրենիսն իմ հայրենարածնէն իմ հաւր աված վասուրոնն ցհոզն Չալալա գաւլին յիշխանութեամբ իմ հոգոյս ավի Ի ժամ ավին Չասկին... թ. ՈՔ»:

8. «Կամաւն Աստուծոյ ես տր. Յոհաննէս կթկս որդի Չալալին մեծ իշխանի կանգնեցի գխաչս ի փրկութիւնս հոգոյ իմոյ...»:

9. «Այս է հանգիստ տր Ովհանէս կթկս. թվ. ՉԺԹ»:

10. «Այս է Առքստիկա կթկս»:

11. «Սիմէոն կթկս»:

12. «Այս է հանգիստ Սիմէոն կթկս թվ. ՌԿԵ»:

13. «Կամաւն Աստուծոյ ես տր Սիմէոն կթկս Մեծձանիս կանգնեցի սուրբ խաչս փրկութեան հոգոյ իմոյ...»:

14. «Թվ. ՉԺԴ. Կամաւն ամենակալին Աստուծոյ ես Իգուքանս անարժան աղախին Գրիստոսի ամուսին Հասանայ դուստր մեծ իշխանին Էլիզովին պարոն մօրն Թամոթի միարանեցա տանս Մեծիրեանց ընծայիւք տր վղ միարանքս. սր. ժամ ավին Յայտնութեան»:

15. «Թ. ՈԿԱ. ես Նահանգ Սակասրա որդի կանգնեց խաչս ի տապանես իմոյ յաղաթս յիշեցէք»:

16. «Կամաւն Աստուծոյ ես Մաթիոս միարանեցայ սուրբ նշանիս. տր Սղ. միարանքս Ա. աւր ժամ ավին... ՉԻԱ»:

17. «Ես Չաքարէ որդի վախտանգա ավի Ղլաղացն Միւթարա հոգոյն Չ. ժամ ավաք»:

18. «ՈԿԱ. թիւ ես Խորիչահ ամուսին վախտանգա տէր Խաչենոյ դուստր մեծին Սարգսի, քոյր Չաքարի եւ Իւանոյ վերստին շինեցի զեկեղեցին Մեծարանց»:

19. «Ես Մուշեղ որդի Հեջրին միարանեցա սուրբ ուխտիս, գնեցի զսուրբ նշանս եւ զՂեղացան եւ ավի վանքս. տր Ս. ին, միարանքս խոստացան ի տարումն Բ. ժամ առաքելոց տաւնին... թվ. ՉԽԹ»:

20. «Թիւ Չ. Չալալին հրամանաւ ես վարհամ Հասան որդիք Սմայատս ավաք զժովատեղին հոզն մեր հաւր հոգոյն ի Մեծիրենց աթոռս, տր վղ միարանքս ավին Գ. ժամ վարդավառին: Ա. Հասան: Ա. Սնպատ: Ա. Թամարի»:

21. «Ես Մուսէս միարանեցա սուրբ նշանի ընծաիւք. տր. վղ. միարանքս ավին տուր Բ. աւր ժամ Աւետեաց»:

22. «ՅԲ. Թուակհանութեան Հայո ի ժամանակս Յովանեսի աղվան... իշխանի ես Սողոմ... եծարանց եպիսկ կանգնեցի զս...»:

23. «Ես Գրիգորիս գնեցի Տանձուտին հոզն ետու ի տունս տր սգ. ետին Չ. աւր սուրբ ժամ յաւթորէքն»:

24. «Թվ. ՈԳԹ. էր. ես Ստեփաննոս, Սարգիս եւ Ներսէս Փիլիսոփէի գնեցի զԿալջաղի հոզն ի Սահագին ետու ի տունս Մեծիրանց տր. վղ. եւ միարանքս ավին ինձ Բ. ժամ ի տաւն ի նոր գատկին»:

25. «Թվ. ՈՂԲ. ես տր Սարգիս կանգնեցի գխաչս ի տապանի եղբար իմո տէր Յակովրոսի արհիպիսկոպոսի եւ Մեծարանց հայրապետի»:

26. «Թվ. ՈՂԴ. ես տր Սարգիս եղբար որդի տն Գիորգա եղբայր տր Յակովրոսի առաջնորդ տանս Մեծարեանց կանգնեցի գխաչս»:

27. «Տէր վարդան(ի) տապանս արհիպիսկոպոսի»:

28. «Ի ՌՃԿԵ թվին. Կամաւն Աստուծոյ ես մահտեսի Յարութիւնս նորոգեցի զսուրբ եկեղեցոյս երկու դուռն յիշատակ ինձ եւ ծնողացն իմ...»:

29. «Ես Յարութիւն կրեցի չալ...»:
30. «Այս է տապան Մեղրիսեղեկ վարդապետին

Որ է որդի Աղասարեանց Սարգիս բէկին, Սա միարան էր Յակովրոյ սրբոյ վանքին Բարի կրօնիւք քառսն եւ ամս լիովին վախճանեցաւ 18 Սեպտեմբերի 1850 ամին»:

31. «Տապան տէր Գասպարին եւ տէր Գասպարեանց, սա էր միարան սրբոյն Յակովրոյ վանսն»:

32. «Կամաւն Աստուծոյ ես տէր տղա... այ արհիպիսկոպոս որդի մե(ծի) Աչրուղին, գնեցի ա... չի տեղս այս սահման... ի ժամաւր ին ձորն գնաց վեր Մարկոսա...»:

33. «Կամովն Աստուծոյ ես Առաքել Միթար Բարդոթան երեց միարանեցաք տանս Մեծարանց տովղ եւ միարանք» (Բանասէր, 1905, էջ 135—147):

Այս արձանագրութիւնները կը ցուցնեն թէ Ս. Յակոբի վանքը սիրուած է եւ եղած կաթողիկոսարան ու հանգստարան: Նաեւ կը յիշեն առաջնորդներէն եւ միարաններէն ոմանց անունները:

Դասեան վարդապետը այս վանքին անուն մասին կ'արտայայտուի թէ կոչուած է՝ Մեծարանց, վասն զի հոն մեծ այրեր՝ կաթողիկոսներ թաղուած են, եւ Ս. Յակոբ, վասն զի հոն էր Ս. Յակոբի աջը (Բանասէր, 1901, էջ 135): Մեկնութիւն մը որ կրնայ հաւանական թուիլ, այլ չէ համոզիչ: Կանխաւ անուանուած է ոչ թէ Մեծարանց, այլ Մեծի արանց: Հայկական թուակհանին ծագումին ատեն արդէն Մեծիրանց գաւառի արքիպիսկոպոսութիւնը կար: Այդ շրջանին անկէ Աղուաններու եպիսկոպոս կ'ըլլայ Տէր Արաս¹⁶ (Կաղանկատուացի Մ. Պատմ. Աղուանից, էջ 391): Բայց դարեր վերջ է որ Ս. Յակոբի վանքը քաղաքական պարագաներու հետեւանքով քան թէ ուրիշ պատճառներով կ'ըլլայ Աղուաններու կաթողիկոսներու աթոռը եւ անկէ կը կառավարէին իրենց հօտը (Վրթանէս Բերթոլի ատեն կապէր Սիմոն Մեծ իւրեանց [Արարատ, 1896, էջ 477]):

Շատ բնական է մտածել՝ որ Մեծարանց վանքը օժտուած ըլլայ բաւական մեծ թուով բնակարաններով: Անոնց մեծազոյն մասը այսօր աւերակոյտի վերածուած է: Պահան-

¹⁶ Մանթի է Գրիգոր եպ. Մեծարանց տան եւ Հասապտկի (Հմմտ. Հասապտկի վանքը):

Նուած հոգածութեան առարկայ չէ եղած, թէպէտ ունէր վանքապատկան զիւղեր եւ 452 դեսիաղին հող (Արարատ, 1896, էջ 43—44. Արձաղանք, 1886, էջ 578. Արշալոյս Արարատեան, 1863, թ. 701):

Նախապէս ունէր Ս. Նշանի մասունք մը եւ յետագային կը ստանայ Ս. Յակոբի մասունք եւս, որ յարգանքի շատ առարկայ կ'ըլլայ (Լէօ, Իմ յիշատակարանը, էջ 410, իսկ հնութիւններու մասին հմմտ. Թօփճեան, Յուց. հայ. Ձեռ. Դաղեան Վ. Ի, Բ., էջ 73): Հաւանորէն ունեցած ըլլայ նաեւ շատ մը զբոսայիտներ:

Հոս կը կցեմ քանի մը յիշատակագրութիւններ, որոնք Մեծարանցի պատմութեան համար արժէքաւոր են:

«Փառք... Արդ... ցանկացող եղեալ... Գրիգոր քահանայ, որ էր սա ի տանէն Արցախայ ի մեծ նախագահ տանէն որ կոչի Մեծիրանց աթոռ եւ ըստ բերման աւուրցս Յակոբու վանք եւ հարազատ հօրեղբարք սորա ի սին (սոյն) տեղի հանդուցեալք սուրբ եւ երջանիկն Յոհան եւ անյաղթ փիլիսոփայն Յակովբ, որ զգափ աւուրց կիսաւրեա կատարեաց ի Քրիստոս... Բայց զբեցաւ աստուածային մատեանս ի թվկ. հայկազեան տոմարիս ՁՈՁ ձեռամբ յոգնամեղ եւ փցուն զբշի Յովհաննու ծառայի Յիսուսի Քրիստոսի ի զաւառիս Սիսակա ի գերահոջակ մայրաքիս Եղիցեաց առ ոոս Տիրամար Աստուածածնին եւ սուրբ կաթողիկէիս եւ փառաւորեալ սուրբ Նախավկայիս յառաջնորդութիւն երկրորդ Ստեփաննոսի Լուսաւորիչ Հայաստանեայց Սիւնեաց աթոռոյս եւ զբեցաւ ի յեղեոն եւ ի զառն ժամանակս, յորում տառապանք եւ նեղութիւն մածեալ ունէին զեղկելի եւ զաշխարհի ազգս քրիստոնէից: Ձի մարմնապէս աշխատութեամբ շարչարեացեն եւ յայսմ պատուհասին խրատէ զմեզ ողորմած բնութիւնն Աստուծոյ եւ զանյաղթելի զաւրն Պարսից առաքեաց ի վերայ մեր եւ յայսմ ամի զեկեղեցիք քանդեցին ի բազում զաւառս եւ ի քաղաքս դառն սուգ առեալ զմահ անձանց ըզձանայեալք եւ բազումք թողեալ զմեհաստանս եւ զանապատ խոռոհանաչ չըջելով տարազմ եղեալ աւտարաշխարհիկ փախտական լինէին լալով եւ կոծելով ի մեծէ մինչեւ ի փոքունս եւ այս բազմապատիկ չարեաց մերոց, զոր կրեցաք եւ ոչ զզջացաք...» (Հ. Ն. Ակիբեան, Հաւաք. Յիշատ. Լալայեանցէն):

1383ին Աւետարան մը կը կազմուի «Մեծ կողմանց Խաչենոյ եպիսկոպոսարանէս մայրաքաղաքէն» (Բարխուդարեան, Արցախ, էջ 263):

Յովհաննէս 1569ին կը գրէ ձեռագիր մը՝ «Երկիրս Խաչենի ի վանս Յակովբայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի ի հայրապետութեան տեառն Գրիգորիսին, որդի Մէհրապ պէկին եւ յաշխարհակալութեան Շահ-Թահմասին» (Հ. Ն. Ակիբեան, Հաւաք. Յիշատ. Հ. Պոտուրեանցէն):

Սաղաթիկէ 1577ին կ'աւարտէ Աւետարան մը՝ «Ի գերահոջակ եւ անուանի եւ փառաւոր սուրբ ուխտիս Յակոբայ վանք եւ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սրբասէր եւ հրեշտակակրօն միայրանիցն սորա տէր Սիմէոն արհիպիսկոպոսին, որ ետ գրել իւր ուսին (անձին) եւ Բարսեղ եպիսկոպոսին եւ սրբասնեալ կրօնաւորացն տէր Եղիշէին եւ տէր Ոսկանին եւ միւս Բարսեղին, տէր Սարգիսին... ի յերկիրս Խաչենի ի հայրապետութեան Տեառն Յովհաննէս կաթողիկոսին եւ յաշխարհակալութեան Շահ Թահմասին» (Թահմասին: Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. Վասպ., էջ 686—688, ուր եւ կը յիշուին «աշխատաւոր վանիցս»՝ Գոհար եւ Մարիան):

«Ի գաւառին Խաչենայ Արցախ նահանգի ի վանքս Մեծիրանայ Ս. Յակովբայ» 1664ին կը գրուի գարձեալ Աւետարան մը (Մմբատեան, Շամախի, էջ 243):

10. ՊՏԿԻ Ս. ԳԵՈՐԳԻ ԿԱՍ ՊՏԳԵՍԵՐԵՐԻ ՎԱՆՔԸ 17

Ուլու-պապ չէնի արեւելեան կողմը՝ բարձր սարի մը գագաթին վրայ թառած է այս վանքը: «...Ունի միեւնոյն ձեւը եւ գրեթէ նոյն իսկ մեծութիւնը, ինչ որ ունի Գոշայ վանքն, մինչեւ քարերի գոյնն, կարծրութեան աստիճանն, ճարտարապետութեան ոճն նոյն եւ նման են միմեանց: Տարբերութիւնն այն է միայն, որ բարձր եւ սրածայր է Գոշայ կաթողիկէն եւ ունի հին գաւիթ» (Արցախ: էջ 163. հմմտ. Լէօ, Իմ յիշատակարանը, էջ 408—409):

Եկեղեցւոյ խորանին առջեւն է Գէորգ սրբակեաց անձին գերեզմանը եւ աջակողմեան սիւնին վրայ գրուած է՝ «Ղուկաս վարդապետ ի թուին Հայոց ՌՄԼ (1781) շինեաց զմի ջրաղաց եւ ետ սմա յիշատակ» (Ջալա-

17 Համանուն մը՝ Գարգմանի մէջ (հմմտ. անոյ):

լեան, Ճամբ., Ա., էջ 196. Ալիշան, Սիսական, էջ 270) 4

Ս. Գէորգի շինութեան ատեն — աւանդութեան համաձայն — աշխատած է նաեւ որձ արջ մը, որ սատկելէն յետոյ հոն ալ թաղուած է: Նման աւանդութիւններ ուրիշ վանքերու համար եւս հիւսուած են:

Երկրորդ տարին անձանօթ է: Աւետարան մը — գրուած 1490ին կը գրուի՝ «Ի դուռն Խաչենու Պտկի սուրբ Գէորգ զօրավարին (Հ. Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Նոր-Բայազետի, էջ 22): Վանքը վերականգնած է Յովհաննէս վարդապետը (Արարատ, 1896, էջ 44), իսկ հոն նահատակուած է մահմետականի մը քրիստոնեայ եղած որդին (Հայ Նոր Վիաներ, էջ 693):

Ս. Գէորգի վանքը թէեւ շատ կալուածի տիրացած է, սակայն խեղճ զրուութեան մատուցած (Արձաղանք, 1886, էջ 578. Արարատ, 1896, էջ 44—45 եւ Արշալոյս Արարատեան, 1863, թ. 701):

11. ՎԱՂԱՀԱՍԻ ԿԱՍ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԱՍ ՏԻՐԱՄՕՐ ՎԱՆՔԸ

Թարթառ գետի աջ ափին հիմնուած է Վաղահաս կամ Վղահաս գիւղի վանքը: Եկեղեցին կոչուած է Մայրաքաղաք կամ Տիրամայր: «Եկեղեցու մեծութիւնից եւ գերեզմանատան ծաւալից երեւում է որ ժամանակահատուածում վանք եղած է մայրաքաղաք» (Արցախ, էջ 191): Բացի այս մեծ եկեղեցիէն, որ տորոնագոյն սրբատաշ քարերով շինուած է, կայ ուրիշ նեղ ու փոքրիկ եկեղեցի մը: Այս երկուքին մէջ մտած է գաւիթը, որ քանի մը մասի բաժնուած է մէկ մասը գրադարան է: Սոյն գաւիթին խորանին ճակատին վրայ արձանագրուած է՝ «Աստուծոյ շնորհիւն եւ կոստանդին (Ա.) կաթողիկոս ամենայն Հայոց միաբանեցայ եպիսկոպոսարանիս ի ձեռն հոգեւոր որդւոյ իմոյ տէր Մարգարէին, յիշխանութեան մեծի Ջալալ Դաւիթն եւ առաջնորդութեան սորայ Տեառն Ներսիսի Աղուանից կաթողիկոսին եւ այլ սպասաւորք սուրբ ուխտիս հաստատեցին Գ. պատարագ ի տաւնի Տեառնընդառաջին, Բ. ինձ, Ա. տէր Մարգարին, կատարելէն օրհնին յԱստուծոյ... ի թվիս ՈՂԵ էր»:

Գաւիթին խորանին աջ կողմը կայ՝ «ՈՒԲ թուականութիւն Հայոց ի հայրապետութեան

Տեառն Գրիգորոյ եւ Հասան որդի Վասակայ շինեցի զեկեղեցիս...»:

Գաւիթին դրան ճակատին վրայ՝ «ԶԳրիգորէս եւ զմայր եւ զամուսին յաղաւթս յիշեցէք, թվ. ՉԺէ»:

Գրադարանի պատին ստորոտը՝ «Յառաջնորդութեան Գրիգորոյ եւ Սիմէոն եւ եղբարք իմ ետու շինել զփոռնախուցս եւ կազմել զգրատունս եւ եղբարք ետուն Բ. պատարագ կատարելէն աւրհնին»:

Իսկ խաչարձանի մը վրայ՝ «Յանուն Աստուծոյ եւ Յոհան գրասէր եւ վախտանգս կանգնեցաք զխաչս ի տապանի որդւոյ իմոյ Գրիգորի, թիւն ՈԿԲ էր (Արցախ, էջ 192. Ջալալեան, Ճան., Բ., 231—233):

Վաղահասի վանքը եպիսկոպոսանիստ եղած է: Առաջնորդներէն ծանօթ են՝ Գրիգոր, Յովհաննէս եւ Ներսէս:

12. ՎԱՃԱՌԻ ՎԱՆՔԸ

Վաճառ արեւակ քաղաքին հանգստարանին մէջ կան եկեղեցի մը եւ երկյարկանի մատուցած: Անոնց շինողն է Մամբան թագուհին: Այնպէս կը թուի՝ թէ անոնց մօտ եղած ըլլայ փոքրիկ վանք մը, վասն զի հոն գրտնուած քանի մը կարեւոր արձանագրութիւններէն ոմանց մէջ կայ «միաբանքս տուին» (Արցախ, էջ 184—185):

13. ՕՆԿԱՅ ՎԱՆՔԸ

Պարեցիք գիւղի մօտերը: Աննշան: Իր քովերը կայ քարուկիրով շինուած մատուց մը, որ Անապատ կը կոչուի (Արցախ, էջ 157—159):

(Շարունակելի): Հ. Հ. ՈՍԿԱՆ